ԱՐԱՄ ՆԱՀԱՊԵՏԻ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

1988 թ. փետրվարի 10-ին հանկարծամահ եղավ հայագետ-արաբագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի արևելյան աղբյուրագիտության բաժնի վարիչ Արամ Նահապետի Տեր-Ղևոնդյանը։



Ա. Տեր-Ղևոնդյանը ծնվել է 1928 թ. հուլիսի 24-ին Կահիրեում (Եգիպտոս)։ 1948 թ. ծնողների հետ ներգաղթել է Սովետական Հայաստան և բնակություն հաստատել Երևան քաղաքում։ 1949 թ. ընդունվել և 1954 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների և գրականության բաժինը։ 1955 թ. ընդունվել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի նպատակային ասպիրանտուրան (Լենինգրադում) և Հ. Օրբելու ղեկավարությամբ 1958 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա Դվինի ամիրայությունը Հայաստանում (IX—XI դդ.) թեմայով, այնուհետև աշխատանքի է անցել ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում՝ նախ իբրև կրտսեր, իսկ 1962—1981 թթ.՝ ավագ գիտաշխատող։

Պատմության ինստիտուտում աշխատելու տարիներին նա անդուլ գիտական հետազոտություններ էր կատարում Հայաստանի VII—IX դդ. սոցիալ-քաղաքական և մշակութային պատմության բազմաթիվ խնդիրների շուրջ։ 1973 թ. պաշտպանում է դոկտորական դիսերտացիա՝ «Հայաստանը և արաբական խալիֆայությունը» թեմայով։

Ա. Տեր-Ղևոնդյանը 1981 թ. աշխատանքի է տեղափոխվում ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտ՝ որպես ավագ գիտական աշխատող։ Այնուհետև հասարակական հիմունքներով, իսկ 1984 թ. մինչև կյանքի վերջը պաշտոնապես ղեկավարում է այդ ինստիտուտի արևելյան աղբյուրագիտության բաժինը։

Ա. Ն. Տեր-Ղևոնդյանն ազնվորեն ծառայում էր հայագիտության և արաբագիտության զարգացմանը։ Իր գիտական կենսագրության երեք տասնամյակից ավելի տարիները նա անմնացորդ նվիրեց Հայաստանում արաբական տիրապետության շրջանի (VII—IX դդ.) պատմության բազմաթիվ կնճռոտ խնդիրների լուսաբանությանը։ Ա. Տեր-Ղևոնդյանի բեղմնավոր գիտական ժառանգությունը պատկառելի է՝ 7 գիրք և մենագրություն և հարյուրից ավելի հոդվածներ, ակնարկներ ու այլ ուսումնասիրություններ, որոնց շնորհիվ նա բարձր և արժանի անուն վաստակեց թե՛ հայագիտության և թե արաբագիտության բնագավառներում։ Նրա ուսումնասիրություններն աչքի են ընկնում գիտական խորությամբ, փաստերի համակողմանի վերլուծությամբ, աղբյուրագիտական հարուստ հենքով և ներկայացնում են հայագիտության ու արաբագիտության մի շարք առանձին բնագավառներ ու պրոբլեմներ։ Առաջինը Ա. Տեր-Ղևոնդյանը ցույց տվեց, որ Հայաստանում արաբական տիրապետությունը վերջնականապես հաստատվել է ոչ թե VII դ. 40-ական թվականներին, այլ նույն դարի վերջին կամ VIII դ. սկզբին։ Ա. Տեր-Ղևոնդյանն ապացուցել է, որ թեև Հայաստանն ընդունեց արաբական գերիշխանությունը, սակայն հայերը, ի տարբերություն մի շարք քրիստոնյա ազգերի և ժողովուրդների, պահպանեցին ներքին ինքնավարությունը։ Արաբական տիրապետության պայմաններում Հայաստանը, ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի, երբեք չկորցրեց իր վարչական ու քաղաքական դեմքը և Վիրքի, Աղվանքի, երբեմն էլ Դարբանդի ու Ջազիրայի հետ միասին կազմում էր արաբական խալիֆայության «Արմինիա» փոխարքայությունը, որը կառավարում էին արաբ ոստի-

կանները։ Սակայն Հայաստանում կառավարմանը մասնակցում էին նաև «Հայոց իշխանները», որոնք յուրատեսակ միջնորդ էին արաբական խալիֆայության և հայ ազնվականության միջև։

Հայաստանի VII—IX դդ. քաղաքական պատմությունից բացի, Ա. Տեր-Ղևոնդյանը մի շարք ուսումնասիրություններ է նվիրել արաբական նվաճումներին և հատկապես արաբական ամիրայություններին։ Նրան է պատկանում վերջիններիս կազմավորման պատմության ուսումնասիրության պատիվը։ Նա ցույց է տվել, որ թեև արաբական ցեղերը մուտք գործեցին Հայաստան, որպեսզի հուսալի հենարան դառնան արաբական ամիրայությունների համար, բայց չկարողացան այնտեղ մշտապես հաստատվել, քանզի երկրի կառավարումը և ներքին ինքնավարությունը գտնվում էին հայ իշխանների ձեռքին։ Ա. Տեր-Ղևոնդյանը հատուկ ուշադրություն է դարձրել նաև արաբական տիրապետության պայմաններում մահմեդականների համեմատությամբ քաղաքացիական սահմանափակ իրավունքներ ունեցող հայերի (ինչպես նաև մյուս քրիստոնյա փոքրամասնությունների) իրավական վիճակին։

Տասնյակ հոդվածներում հիմնավորապես լուսաբանված են մշակութային կյանքի, հայ-արաբական գրական-բանահյուսական առնչությունների մի շարք հարցեր։ Մասնավորապես արժեքավոր են նրա պրպտումները հայերին վերաբերող արաբական վիպական զրույցների ուղղությամբ։

Մեծ է Ա. Տեր-Ղևոնդյանի ավանդն արաբական և հայկական աղբյուրների թարգմանության, մեկնության, գնահատման և հրատարակման գործում (XI դարի անանուն աղբյուրը, Ագաթանգեղոսի «Պատմության» արաբական նոր խմբագրությունը և Իբն ալ-Ասիրի «Լիակատար պատմությունը»)։ Անխոնջ գիտնականը կարևոր ճշգրտումներ է կատարել Ագաթանգեղոսի «Պատմության» խմբագրությունների հարցում, պարզաբանել դրանց ճյուղավորումները։ Հարուստ ծանոթագրություններով և մեծ հմտությամբ նա գրաբարից աշխարհաբարի է վերածել Ղևոնդի և Ագաթանգեղոսի երկերը։ Նա խմբագրել է նաև մի շարք պատմագիտական մենագրություններ։

Ա. Տեր-Ղևոնդյանն ակտիվորեն մասնակցել է «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի ստեղծմանը, մի քանի տասնյակ հոդվածներ է գրել «Հայկական սովետական հանրագիտարանի» համար, արժեքավոր ակնարկներ նվիրել հայ մշակույթի նշանավոր գործիչներին և, վերջապես, զեկուցումներ է կարդացել մի շարք միջազգային կոնֆերանսներում և համամիութենական գիտաժողովներում։ Գիտական աշխատանքին զուգընթաց Ա. Տեր-Ղևոնդյանը դասախոսական աշխատանք է կատարել տարբեր բուհերում։

Ա. Տեր-Ղևոնդյանը կյանքից հեռացավ ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում։ Ցավոք, նրա որոշ աշխատություններ մնացին անավարտ և անտիպ, իսկ բազում մտահղացումներ և ծրագրեր կյանքի ուղեգիր չստացան։ Սակայն իր գիտական մեծ վաստակով նա պատվավոր տեղ նվաճեց հայագիտության և արաբագիտության մեջ։ Ակնանավոր գիտնականի, ազնիվ քաղաքացու հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու